



Հիմնական տնտեսական միտումները Հայաստանում

Մայիս 2006

Ներկայացվում են 2006 թվականի մայիսի դրությամբ առկա վերջին ամսական ցուցանիշները: ՀՆԱ-ի, համախառն թողարկման, պետական բյուջեի, արտաքին հատվածի վերջին թարմ ամսական տվյալները վերաբերում են հունվար-մարտ ամիսներին, իսկ ֆինանսական, արտաբերության և սպառողական շուկաների ցուցանիշները՝ ապրիլին: Ներկայացվում են նաև ՀՆԱ-ի 2004 թվականի վերջնական հաշվետու և 2005 թվականի վերանայված ցուցանիշները:

Ելենա Մանուկյան

Հրատարակվում է «Օքսֆամ» ՄԲ աջակցությամբ



Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ամփոփում

	2003			2004			2005			2006		
	տարեկան ցուցանիշներ						հունվար-մարտի ցուցանիշներ					
Իրական հատված												
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	874.4	1,113.4	1,524.6	100.8	119.7	162.3	183.3					
ՀՆԱ-ի իրական աճ (%)	14.0	10.5	14.0	12.5	7.8	7.8	8.0					
Արդյունաբերության աճ (%)	15.6	2.2	7.4	10.8	3.2	3.9	-5.1					
Գյուղատնտեսության աճ (%)	4.2	14.2	11.2	6.6	5.9	1.1	3.5					
Շինարարության աճ (%)	45.5	15.3	35.1	34.5	16.9	16.0	25.0					
Տրանսպորտ և կապի աճ (%)	8.3	19.5	13.2	12.6	14.2	10.6	15.8					
Առևտուր և հանրային սննդի աճ (%)	14.1	10.6	9.6	10.3	9.6	3.5	15.5					
Ծառայությունների աճ (%)	8.6	11.7	10.9	14.0	16.5	9.1	13.4					
ՀՆԱ-ի դեֆլատոր (%)	4.6	6.3	3.2	3.6	6.2	6.2	-1.0					
Սպառողական գների ինդեքս (ժ/շ միջին, %)	4.7	7.0	0.6	3.4	7.9	4.4	-0.9					
Հարկաբյուջետային հատված (պետական բյուջեի ցուցանիշներն ըստ ֆինանսավորման)												
Հարկային եկամուտներ (մլրդ դրամ)	212.2	250.1	304.3	42.7	50.2	61.0	70.9					
Ծախսեր (մլրդ դրամ)	242.0	295.9	395.2	44.5	57.2	64.0	80.0					
Դեֆիցիտ (մլրդ դրամ)	-8.1	-2.0	22.2	-3.7	0.5	-13.4	-2.2					
Հարկային եկամուտներ (ՀՆԱ-ի %)	13.1	13.1	13.6	22.5	23.1	24.5	26.6					
Ծախսեր (ՀՆԱ-ի %)	14.9	15.5	17.6	23.4	26.3	25.7	30.0					
Դեֆիցիտ (ՀՆԱ-ի %)	0.5	0.1	1.0	2.0	0.2	5.4	0.8					
Արտաքին հատված												
Արտահանում (\$ՕԲ, մլն ԱՄՆ դոլար)	685.6	722.9	950.4	132.9	151.9	195.3	184.4					
Ներմուծում (ՍԻՖ, մլն ԱՄՆ դոլար)	1,279.5	1,350.7	1,767.9	256.8	290.3	371.5	422.0					
Անևտրային հաշվեկշիռ (մլն ԱՄՆ դոլար)	-593.9	-627.8	-817.6	-123.9	-138.5	-176.2	-237.6					
Արտահանման աճ (%)	35.7	5.4	31.5	10.7	14.3	28.6	-5.6					
Ներմուծման աճ (%)	29.6	5.6	30.9	25.6	13.1	27.9	13.6					
Անևտրային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %)	21.2	17.6	16.7	38.3	36.0	33.8	40.3					
Դրամավարկային հատված												
Փողի զանգված (ժ/շ վերջ, մլրդ դրամ)	233.8	285.9	365.6	183.3	226.6	278.8	358.5					
ՀՀ ԿԲ շուտ արտաքին ակտիվներ (մլրդ դրամ)	157.8	149.3	237.6	116.3	145.5	171.4	211.7					
Փողի զանգվածի շրջապտույտի արագություն*	6.9	6.7	6.1	1.0	1.0	0.9	0.7					
Փողի բազմարկիչ	2.05	2.18	1.85	1.90	2.17	2.24	1.88					

* Հաշվարկվել է որպես անվանական ՀՆԱ-ի և փողի զանգվածի հարաբերություն:

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ:

Ֆինանսական, արտարժույթային և սպառողական շուկաներ

	2002				2003				2004				2005			
	տարեկան ցուցանիշներ								2006-ի ցուցանիշներ							
Պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերություն (%)																
9-12-ամսյա ՊԿՊ-ներ	15.6	9.7	-	-	4.9	4.1	4.3	4.8								
Միջնաժամկետ մասնակի մարումներով	19.7	-	5.6	-	-	4.9	4.9	6.5								
ՀՀ ԿԲ բանկային տոկոսի հաշվարկային դրույք	19.0	18.0	16.0	16.0	16.0	16.0	15.0	15.0								
Վարկերի տոկոսադրույքներ	18.8	20.9	18.2	17.3	16.9	17.1	16.5	na								
Ավանդների տոկոսադրույքներ	4.2	6.4	4.4	6.5	6.4	5.9	5.2	na								
Դրամ / ԱՄՆ դոլար միջին փոխարժեքի աճ (%)	3.3	0.9	-7.8	-14.2	0.5	-0.3	0.2	-0.2								
Դրամ / ԱՄՆ դոլար փոխարժեք (ժ/շ վերջ)	584.9	566.0	485.8	450.2	449.2	450.7	450.9	446.1								
Դրամ / ԵՎՐՈ փոխարժեք (ժ/շ վերջ)	606.9	702.2	661.1	532.4	542.7	534.2	545.4	553.8								
Դրամ / ՌԴ ռուբլի փոխարժեք (ժ/շ վերջ)	18.3	19.2	17.5	15.6	16.0	16.0	16.2	16.3								
Սպառողական գների ինդեքս (ժ/շ վերջ, %)**	2.0	8.6	2.0	-0.2	2.5	0.2	0.1	0.3								
Պարենային ապրանքներ*	1.9	12.4	2.8	-1.2	4.6	-0.1	0.2	0.0								
Ոչ պարենային ապրանքներ	2.7	0.4	0.0	2.1	-0.2	-0.1	0.2	1.0								
Ծառայություններ	1.5	2.1	0.5	1.9	0.2	1.0	-0.2	0.4								

* Ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ: Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ԱՎԾ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ:

**2006 թվականի հունվար - մարտ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից

Հիմնական միտումները

Իրական հատված

2006 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով մեկ շնչին ընկնող ՅՆԱ-ն կազմեց 183 ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելանալով 21 ԱՄՆ դոլարով:

8 տոկոս տնտեսական աճին առավել նպաստեցին առևտրի, ծառայությունների և շինարարության ճյուղերը, համապատասխանաբար, 2.6, 2.2 և 1.9 տոկոսային կետերով: Աճի առավել բարձր ցուցանիշը շինարարության ճյուղում էր՝ 25 տոկոս: Միևնույն ժամանակ արդյունաբերության ճյուղի համախառն ավելացված արժեքը կրճատվեց 5.1 տոկոսով:

ՅՆԱ-ի 43 տոկոսը ձևավորվեց ծառայությունների մատուցման, 41.2 տոկոսը՝ ապրանքների թողարկման հաշվին և 15.8 տոկոսը՝ զուտ հարկերից (առանց սուբսիդիաների):

Բյուջետային հատված

Ըստ ՀՀ ՖԷՆ նախնական տվյալների 2006 թվականի առաջին եռամսյակին պետական բյուջեի ծախսերի աճը քառակի առաջանցիկ էր եկամուտների նկատմամբ: Այնուամենայնիվ ՅՆԱ-ի նկատմամբ եկամուտները 0.8 տոկոսային կետով գերազանցեցին ծախսերի մակարդակը՝ ձևավորելով բյուջեի 2.2 միլիարդ դրամի հավելուրդ:

Թեև եկամուտները մոտ 5 միլիարդ դրամով (կամ 6 տոկոսով) գերազանցեցին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մակարդակը, այնուամենայնիվ աճի տեմպը դանդաղեց մոտ 6 անգամ: Հիմնականում դա պայմանավորված էր ոչ հարկային եկամուտների (2.2 անգամ) և պաշտոնական տրանսֆերտների (6.6 անգամ) անկումով, ինչպես նաև ԱԱՀ-ից մուտքերի բավականին փոքր (1.7 տոկոս) աճով, որը վերջին հինգ տարիներին աճի առավել ցածր ցուցանիշն էր: Հարկային եկամուտների 16.2 տոկոսով աճին առավել նպաստեցին շահութահարկից և եկամտահարկից մուտքերը, համապատասխանաբար, 8 և 4 տոկոսային կետով, իսկ ԱԱՀ-ի ավանդը կազմեց ընդամենը 0.7 տոկոսային կետ՝ նախորդ տարվա 12.9 տոկոսային կետի փոխարեն:

2005-ի առաջին եռամսյակի համեմատ ծախսերի 24.9 տոկոսով ավելացումը հիմնականում պաշտպանության, կրթության (և գիտության), առողջապահության և տրանսպորտի (ճանապարհային տնտեսություն և կապ) ոլորտներին ուղղված հատկացումների աճի արդյունք էր:

25 տոկոսով ավելացել էին ապրանքների և ծառայությունների պետական գնումները, ինչպես նաև ընթացիկ տրանսֆերտները, ընդ որում այդ երկու ծախսային հոդվածների հանրագումարը կազմել էր բյուջեի ամբողջ ծախսերի 72 տոկոսը: Աճի առավել բարձր տեմպը՝ 71.3 տոկոս, կապիտալ բնույթի ծախսերի գծով էր, որոնք կազմեցին բյուջեի ամբողջ ծախսերի 7.6 տոկոսը:

Արտաքին առևտուր

2006 թվականի առաջին եռամսյակին Հայաստանից արտահանվող ապրանքների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվեց 5.6 տոկոսով: Միևնույն ժամանակ 13.6 տոկոսով աճեց երկիր ներմուծվող ապրանքների ծավալը, որի արդյունքում առևտրային հաշվեկշիռը նախորդ տարվա համեմատ խորացավ 61 միլիոն ԱՄՆ դոլարով (կամ 35 տոկոսով) և կազմեց ՅՆԱ-ի շուրջ 40 տոկոսը:

Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ արտահանման ծավալների անկում տեղի ունեցավ գրեթե բոլոր խոշոր գործընկերների գծով, այդ թվում, դեպի Գերմանիա (11.4 տոկոսով), Բելգիա (4.8 տոկոսով), ՌԴ (4.4 տոկոսով), Իսրայել (32.1 տոկոսով), որոնց, գումարային արտահայտությամբ, ուղղվել էր արտահանվող ապրանքների կեսից ավելին:

Ներմուծման կառուցվածքում մոտ 33 տոկոսը կազմեցին ԱՊՀ, իսկ 27 տոկոսը՝ Եվրամիության արտադրության ապրանքները: 2005-ի հունվար-մարտի համեմատ 32 տոկոսով աճել էր ռուսական, 51 տոկոսով՝ ուկրաինական, 61 տոկոսով՝ գերմանական ապրանքների ներմուծումը:

Մարդասիրական օգնության կարգով Հայաստան էր ներմուծվել 10.1 միլիոն ԱՄՆ դոլարի ապրանք, որը 12 տոկոսով ցածր էր նախորդ տարվա նույն ցուցանիշից: Օգնության գերակշիռ մասը՝ 73 տոկոսը, տրամադրել էր ԱՄՆ-ն:

Դրամավարկային հատված

Ըստ ՀՀ ԿԲ նախնական տվյալների փողի զանգվածը 2006-ի մարտի վերջին՝ փետրվարի վերջի համեմատ աճել էր 1.6 տոկոսով և կազմել 358.5 միլիարդ դրամ: Շրջանառության մեջ կանխիկը նվազել էր 0.8 միլիարդով: Մյուս կողմից աճել էին տնտեսությունից ներգրավված ավանդները՝ ինչպես դրամով (3.7 տոկոսով), այնպես էլ արտարժույթով (2.5 տոկոսով):

Նախորդ տարվա մարտի համեմատ փողի զանգվածն աճել էր 28.6 տոկոսով, այդ թվում դրամով ցրահանջ և ժամկետային ավանդները, համապատասխանաբար, 51.6 և 43.7 տոկոսով, իսկ արտարժույթով ավանդները՝ 10.7 տոկոսով: Արդյունքում բարելավվեց արտարժույթով և դրամով ավանդների հարաբերակցությունը. այսպես, եթե 2005-ի մարտին արտարժույթով ավանդները 2.5 անգամ գերազանցում էին դրամով ներգրավվածներին, ապա 2006-ի մարտին այդ ցուցանիշը կազմեց 1.8:

Արտարժույթային փոխարժեքներ

2006 թվականի ապրիլի ընթացքում ՀՀ դրամի փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ դրսևորել էր արժեվորման, իսկ եվրոյի և ռուսական ռուբլու նկատմամբ արժեզրկման վարքագիծ: Ապրիլին ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուսական ռուբլու փոխարժեքների առավելագույն մակարդակները կազմեցին, համապատասխանաբար, 451.6, 555.8 և 16.4 դրամ: Ամսվա ընթացքում առավելագույն տատանումը եվրոյի փոխարժեքի գծով էր՝ 12 դրամ (կամ 2.2 տոկոս):

2006-ի ապրիլի վերջին 2005-ի դեկտեմբերի վերջի համեմատ դրամի փոխարժեքը նույնպես արժեվորվել էր ԱՄՆ դոլարի (մոտ 1 տոկոսով) և արժեզրկվել՝ եվրոյի և ռուսական ռուբլու նկատմամբ (4 և 4.3 տոկոսով, համապատասխանաբար):

Սպառողական շուկա

2006-ի ապրիլին մարտի համեմատ սպառողական շուկայում տեղի ունեցավ 0.3 տոկոս գնաճ, ընդ որում ոչ պարենային ապրանքների և մատուցված ծառայությունների գներն աճեցին, համապատասխանաբար, 1 և 0.4 տոկոսով:

Չնայած պարենային ապրանքների գների ընդհանուր մակարդակը մնացել էր անփոփոխ, այնուամենայնիվ, առանձին ապրանքատեսակների գները մարտի համեմատ ունեցան նկատելի տատանումներ, որոնցից, թերևս առավել հիշարժանը ձկնամթերքի և շաքարավազի թանկացումն էր, համապատասխանաբար, 26.7 և 8 տոկոսով: Միևնույն ժամանակ իջել էին բանջարեղենի և կարտոֆիլի՝ 5.2 տոկոսով, ինչպես նաև ձվի գները՝ 4.8 տոկոսով:

2006-ի ապրիլին՝ 2005-ի դեկտեմբերի համեմատ սպառողական գներն աճել էին 3.1 տոկոսով, իսկ 2006-ի հունվար-ապրիլին սպառողական գների միջին մակարդակը 2005-ի նույն ցուցանիշի համեմատ նվազել էր 1.5 տոկոսով:

2006 թվականի ապրիլին ՀՀ ԱՎԾ-ն որոշ փոփոխություններ կատարեց սպառողական գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության մեջ: Այսպես, 2006-ի հունվարից սպառողական զամբյուղում լրացուցիչ ներառվել է 70 ապրանք-ծառայություն՝ վերջիններիս ընդհանուր թիվը հասցնելով 470-ի: Միաժամանակ միջին հանրապետական ցուցանիշներում ներառվել է նաև ՀՀ Արարատի մարզը (Արտաշատ քաղաքը): Արդյունքում վերահաշվարկվել են 2006-ի հունվար-մարտ ամիսների ինդեքսները:

2006 թվականի առաջին եռամսյակին ՀՆԱ-ի դեֆլյատորը, շարունակելով նախորդ ամիսների միտումը, դարձյալ բացասական էր և կազմեց -1 տոկոս:

Հիմնական բյուջետային ցուցանիշներ

միլիարդ դրամ, ըստ ֆինանսավորման

	2003	2004	2005	2003	2004	2005	2006
	տարեկան ցուցանիշներ			առաջին եռամսյակի ցուցանիշներ			
Պետբյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	250.1	297.9	372.9	48.2	56.7	77.4	82.1
Ընդամենը եկամուտներ	240.2	288.2	363.1	48.1	56.7	74.5	81.7
Ընթացիկ եկամուտներ	237.0	279.1	350.7	46.6	56.4	74.0	79.1
Հարկային եկամուտներ, այդ թվում	212.2	250.1	304.3	42.7	50.2	61.0	70.9
Ավելացված արժեքի հարկ	107.8	117.9	146.8	23.0	24.8	31.3	31.8
Շահութահարկ	17.6	32.0	46.6	3.5	4.9	6.7	11.5
Եկամտահարկ	16.8	20.4	26.6	3.4	4.1	5.2	7.6
Ակցիզային հարկ	39.1	40.7	38.6	7.5	9.1	8.0	9.0
Պետական տուրք	15.2	16.9	17.3	2.8	3.3	3.2	3.7
Ոչ հարկային եկամուտներ	9.5	12.0	29.2	1.1	2.8	9.9	4.6
Կապիտալ եկամուտներ	3.2	9.1	12.4	1.6	0.3	0.5	2.6
Պաշտոնական տրանսֆերտներ	9.9	9.7	9.8	0.1	-	2.9	0.4
Պետբյուջեի ծախսեր	242.0	295.9	395.2	44.5	57.2	64.0	80.0
Պաշտպանություն	44.3	52.5	64.4	7.5	10.3	11.3	14.7
Հասարակական կարգի պահպանություն	19.9	23.2	33.3	3.8	4.6	5.4	6.6
Կրթություն և գիտություն	32.9	45.2	58.8	5.5	7.5	9.9	12.7
Առողջապահություն	18.9	24.3	30.4	4.5	4.8	4.2	6.3
Սոց. ապահովագրություն և ապահովություն	29.3	35.3	44.1	6.4	8.2	10.2	11.6
Ընթացիկ ծախսեր	214.5	252.8	310.1	42.0	52.8	57.7	70.5
Աշխատավարձ	13.9	24.3	33.2	1.7	4.7	6.2	7.7
Տոկոսավճարներ	11.3	9.8	9.9	3.4	2.4	2.2	2.4
Սուբսիդիաներ	15.1	18.4	16.5	3.5	6.3	3.6	3.2
Ընթացիկ տրանսֆերտներ	43.9	60.1	76.6	8.3	11.2	15.6	19.5
Ապրանքներ և ծառայություններ	130.3	140.1	173.8	25.1	28.1	30.1	37.7
Կապիտալ ծախսեր	21.6	32.7	71.9	0.9	2.4	3.5	6.1
Վարկավորում հանած մարում	5.8	10.5	13.2	1.6	2.1	2.8	3.4
Դեֆիցիտի ֆինանսավորում	-8.1	-2.0	22.2	-3.7	0.5	-13.4	-2.2

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

տոկոս ՅՆԱ-ի նկատմամբ, ըստ ֆինանսավորման

	2003	2004	2005	2003	2004	2005	2006
	տարեկան ցուցանիշներ			առաջին եռամսյակի ցուցանիշներ			
Հարկային եկամուտներ, այդ թվում	13.1	13.1	13.6	22.5	23.1	24.5	26.6
Ավելացված արժեքի հարկ	6.6	6.2	6.5	12.1	11.4	12.6	12.0
Շահութահարկ	1.1	1.7	2.1	1.9	2.2	2.7	4.3
Եկամտահարկ	1.0	1.1	1.2	1.8	1.9	2.1	2.9
Ակցիզային հարկ	2.4	2.1	1.7	3.9	4.2	3.2	3.4
Պաշտոնական տրանսֆերտներ	0.6	0.5	0.4	0.03	-	1.2	0.2
Ընդամենը պետբյուջեի ծախսեր, այդ թվում	14.9	15.5	17.6	23.4	26.3	25.7	30.0
Պաշտպանություն	2.7	2.8	2.9	3.9	4.7	4.5	5.5
Հասարակական կարգի պահպանություն	1.2	1.2	1.5	2.0	2.1	2.2	2.5
Կրթություն և գիտություն	2.0	2.4	2.6	2.9	3.4	4.0	4.8
Առողջապահություն	1.2	1.3	1.4	2.4	2.2	1.7	2.4
Սոց. ապահովագրություն և ապահովություն	1.8	1.9	2.0	3.4	3.8	4.1	4.4
Դեֆիցիտի ֆինանսավորում	0.5	0.1	1.0	2.0	0.2	5.4	0.8

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ: